դեան երեք մասն գաղթեցին Պարսկաստան եւ Շահաբբաս բնակեցրեց Նրանց Նոյն իսկ Սպահանի մէջ։ Նոյնպէս 1603 թուին Մելքիսէթ Կաթուղիկոսն իր երկու եպիսկոպոսների հետ գնաց Սպահան եւ յորդորեց թագաւորին գալ ազատել Հայաստանն Օսմանցւոց ձեռքից։ Այդ եկաւոր Հայերի եւ Կաթուղիկոսի վկայութիւնը համոզեցին Շահաբբասին, որ իր դիտաւորութիւնը կարող է հեշտութեամբ իրագործել, որովհետեւ բնիկ ժողովուրդն իր կողմն պէտք է լինի։ Տեսնելով Հայերի՝ իր արշաւանքի մէջ իրան օգնելու այդ պատրաստակամութիւնը, Շահաբբաս մեծապէս ուրախացաւ եւ արդէն պատրաստւում էր զօրաժողով լինել, երբ մի նոր յաջող առիթ ներկայացաւ եւ ստիպեց Նրան աճապարել։ Սալմաստի իշխան Քիւրտ Ղազի խանը, իր մեծաւոր թաւրիզու Ալի Փաշայից նեղուելով, կամեցաւ Պարսից կողմն անցնել, ուստի մի դեսպան ուղարկեց Շահաբբասին, թելադրելով Նրան գալ Հայաստան եւ հանել Օսմանցիներին, խոստանալով ըստ ամենայնի ձեռնտու լինել Նրան։ Ղազի խան դեսպանն ուղարկելուց՝ յայտնի կերպով ապստամբեց Ալի Փաշայից։ Ստանալով այդ հրաւէրը, Շահաբբաս անմիջապէս ժողովեց իր նախարարներին, խաներին եւ բազմաթիւ զօրք, եւ շտապով չուեց դէպ ի թաւրէզ։ Իր հետ առաւ Հայերից շատերին եւ Մելքիսէթ կաթուղիկոսին։ Մինչդեռ Օսմանցիները ոչինչ չգիտէին եւ Ալի Փաշան իր 20 հազար զօրքով գնացել